ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-25/07-2

ք. Սպիտակ «19» 06 2025թ.

Սպիտակի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Ք. Նիկողոսյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՇԻՆԱՐՎԵՍՏ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մարգարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված՝ Սպիտակ համայնքի Սարահարթ բնակավայրի 5-րդ, 6-րդ և 15-րդ փողոցների, Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրում փողոցների և Սպիտակ համայնքի Լեռնանցք բնակավայրի գերեզմանատուն տանող ճանապարհի տուֆ քարով սալարկման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-25/07 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալատուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա)Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ)Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ)Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ)Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1095 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _7_ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին

չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 172800000 (մեկ հարյուր յոթանասուներկու միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 28800000 (քսանութ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

2-րդ չափաբաժին՝ 85200000 (ութսունհինգ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 14200000 (տասնչորս միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

4-րդ չափաբաժին՝ 87 600 000 (ութսունյոթ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 14 600 000 (տասնչորս միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Ընդ որում կանխավճար հատկացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ ապահովել է շինարարության կազմակերպման աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումները՝ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է տվյալ շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը

կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը	Տուգանք - Պայմանագրային գնի 0,5 % չափով
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	Տուգանք - Պայմանագրային գնի 0,5 % չափով
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	Տուգանք - Պայմանագրային գնի 0,5 % չափով
4	Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր	Տուգանք - Պայմանագրային գնի 0,5 % չափով

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

---

[1] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[2]

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

---

[2] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սպիտակ համայնք
Հասցե՝ ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06963722
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ՝ 900242303023
Համայնքի ղեկավար՝

_____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինարվեստ» ՍՊԸ
ք. Երևան, Արաբկիր, Սոսեի փող. շենք1 բն. 61
էլ. հասցե՝ shinarvest@gmail.com
Հ/Հ 1150006772902910
ՀՎՀՀ 00221091
հեռ. 093303002; 033-82-07-07,
Տնօրեն՝

_____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«19» 06 2025թ. կնքված
«ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-25/07-2» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՏՈՒՖ ՔԱՐՈՎ ՍԱԼԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Չափաբաժին 2

Սպիտակ համայնքի, Սարահարթ բնակավայրի 5-րդ, 6-րդ և 15-րդ փողոցների տուֆ քարով սալարկման նախագիծ

N/N ը/կ	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Քանակ	1 միավ. ընդ.արժ. հազ.դր.	Ընդհանուր արժեքը հազ. դր.
1	2	3	4	5	6
	Հատված 950մ				
	Հողային աշխատանքներ				
1	10e IV կարգի գրունտի մշակում բուլդոզերով, տեղափոխելով 100մ լիցք	1000մ³	0.1	1779.21	177.92
2	Լիցքի խտացում պնևմոգլդոնով մեկ հետքով 6 անցումով, 30սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	1000մ³	0.1	864.05	86.40
3	10e IV կարգի գրունտի քանդում բուլդոզերով, տեղափոխելով 30մ լիցք	1000մ³	1.054	1056.44	1113.49
4	10e IV կարգի գրունտի բարձում ավտոինքնաթափեր էքսկավատորով (1մ³)	1000մ³	1.054	789.47	832.10
5	Տեղափոխում լցակույտ 3կմ	տ	2003	1.60	3206.15
6	Հողային պաստառի մակերևույթի համահարթեցում մեխանիզմով	100մ²	50.14	38.58	1934.42
	Ճանապարհային պատվածք				
1	Ավազե շերտ h=10սմ	մ³	472	8.71	4111.76
2	Տուֆ քարով սալարկ h=18սմ հաստ. (20x40x18սմ չափի բլոկներ)/գծային չափերում մինչև 3սմ շեղումները թույլատրելի են/	100մ²	47.2	635.52	29996.57
3	2սմ հաստությամբ ցեմենտավազե շաղախ մանրահատիկ ավազով տուֆե քարերի արանքում, 1:3	մ²	411	8.64	3550.62
4	Թաքնված եզրաքար 15x28սմ չափսի միաձույլ բետոնից B20, լայնական և երկայնական երկարությունները միասին	մ³	82	61.76	5064.55
5	Հետլիցք եզրաքարի հետնամասում տեղի գրունտից	մ³	133	1.82	242.67

	Ուղիներ				
1	10e IV կարգի գրունտի քանդում բուլդոզերով, տեղափոխելով 30մ լիցք	1000մ³	0.059	1056.44	62.33
2	10e IV կարգի գրունտի բարձում ավտոինքնաթափեր էքսկավատորով (1մ³)	1000մ³	0.059	789.47	46.58
3	Տեղափոխում լցակույտ 3կմ	տ	111	1.60	177.67
4	Հողային պաստառի մակերևույթի համահարթեցում մեխանիզմով	100մ²	2.09	38.58	80.63
5	Ավազե շերտ h=10սմ	մ³	20.9	8.71	182.07
6	Տուֆ քարով սալարկ h=18սմ հաստ. (20x40x18սմ չափի բլոկներ)/գծային չափերում մինչև 3սմ շեղումները թույլատրելի են/	100մ²	2.09	635.52	1328.24
7	2սմ հաստությամբ ցեմենտավազե շաղախ մանրահատիկ ավազով տուֆե քարերի արանքում, 1:3	մ²	18	8.64	155.50
8	Թաքնված եզրաքար 15x28սմ չափսի միաձույլ բետոնից B20, լայնական և երկայնական երկարությունները միասին	մ³	1	61.76	61.76
	Բետոնե վաքեր (30 x 34)				
1	Բետոնե վաքեր (30 x 34)	հատ	110	43.66	4802.31
2	Փոսորակի փորում մեխանիզմով	1000մ³	0.11844	789.47	93.50
3	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	23.03	12.74	293.44
4	Քսվածքային ջրամեկուսացում	100մ²	2.5004	114.26	285.69
5	Հետադարձ լիցք ձեռքով	100մ³	0.2632	215.57	56.74
6	Ավելացած բնահողի բարձում ա/ի վրա	տ	165.8	0.75	123.82
7	Տեղափոխում լցակույտ 3կմ	տ	165.8	1.60	265.42
8	B-20 դասի բետոն մանրահատիկ ավազով	մ³	3	60.34	181.02
	Մետաղական ցանց				
1	Մետաղական ցանցի տեղադրում	տ	0.71	95.18	67.17
2	Մետաղական անկյունակ 63*63*6մմ	գծմ	76	3.13	236.81
3	Ամրան A - 500c 25մմ	տ	0.2726	441.77	120.43
4	Մետաղական էլեմենտների յուղաներկում (2 անգամ)	100մ²	0.08	159.33	12.75
	Հատված 43մ				
	Հողային աշխատանքներ				
1	10e IV կարգի գրունտի քանդում բուլդոզերով, տեղափոխելով 30մ լիցք	1000մ³	0.637	1056.44	672.95
2	10e IV կարգի գրունտի բարձում ավտոինքնաթափեր էքսկավատորով (1մ³)	1000մ³	0.637	789.47	502.89
3	Տեղափոխում լցակույտ 3կմ	տ	1210	1.60	1936.81
4	Հողային պաստառի մակերևույթի համահարթեցում մեխանիզմով	100մ²	6.88	38.58	265.43

	Ճանապարհային պատվածք				
1	Ավազե շերտ h=10սմ	մ³	67.5	8.71	588.02
2	Տուֆ քարով սալարկ h=18սմ հաստ. (20x40x18սմ չափի բլոկներ)/գծային չափերում մինչև 3սմ շեղումները թույլատրելի են/	100մ²	6.75	635.52	4289.76
3	2սմ հաստությամբ ցեմենտավազե շաղախ մանրահատիկ ավազով տուֆե քարերի արանքում, 1:3	մ²	59	8.64	509.70
4	Թաքնված եզրաքար 15x28սմ չափսի միաձույլ բետոնից B20, լայնական և երկայնական երկարությունները միասին	մ³	4	61.76	247.05
5	Կողնակների իրականացում ավազակոպիճով h=10սմ	100մ²	1.29	104.20	134.42
	Ուղիներ				
1	10e IV կարգի գրունտի քանդում բուլդոզերով, տեղափոխելով 30մ լիցք	1000մ³	0.017	1056.44	17.96
2	10e IV կարգի գրունտի բարձում ավտոինքնաթափեր էքսկավատորով (1մ³)	1000մ³	0.017	789.47	13.42
3	Տեղափոխում լցակույտ 3կմ	տ	31	1.60	49.62
4	Հողային պաստառի մակերևույթի համահարթեցում մեխանիզմով	100մ²	0.59	38.58	22.76
5	Ավազե շերտ h=10սմ	մ³	5.9	8.71	51.40
6	Տուֆ քարով սալարկ h=18սմ հաստ. (20x40x18սմ չափի բլոկներ)/գծային չափերում մինչև 3սմ շեղումները թույլատրելի են/	100մ²	0.59	635.52	374.96
7	2սմ հաստությամբ ցեմենտավազե շաղախ մանրահատիկ ավազով տուֆե քարերի արանքում, 1:3	մ²	5	8.64	43.19
8	Թաքնված եզրաքար 15x28սմ չափսի միաձույլ բետոնից B20, լայնական և երկայնական երկարությունները միասին	մ³	1	61.76	61.76
	Հատված 286մ				
	Հողային աշխատանքներ				
1	10e IV կարգի գրունտի քանդում բուլդոզերով, տեղափոխելով 30մ լիցք	1000մ³	0.432	1056.44	456.38
2	10e IV կարգի գրունտի բարձում ավտոինքնաթափեր էքսկավատորով (1մ³)	1000մ³	0.432	789.47	341.05
3	Տեղափոխում լցակույտ 3կմ	տ	821	1.60	1314.15
4	Հողային պաստառի մակերևույթի համահարթեցում մեխանիզմով	100մ²	14.3	38.58	551.70
	Ճանապարհային պատվածք			0.00	0.00
1	Ավազե շերտ h=10սմ	մ³	134.4	8.71	1170.81

2	Տուֆ քարով սալարկ h=18սմ հաստ. (20x40x18սմ չափի բլոկներ)/գծային չափերում մինչև 3սմ շեղումները թույլատրելի են/	100մ²	13.44	635.52	8541.40
3	2սմ հաստությամբ ցեմենտավազե շաղախ մանրահատիկ ավազով տուֆե քարերի արանքում, 1:3	մ²	117	8.64	1010.76
4	Թաքնված եզրաքար 15x28սմ չափսի միաձույլ բետոնից B20, լայնական և երկայնական երկարությունները միասին	մ³	24	61.76	1482.31
5	Հետլիցք եզրաքարի հետնամասում տեղի գրունտից	մ³	40	1.82	72.98
	Ընդամենը				**83674.19**
	ԱԱՀ 20%				**16734.84**
	Ընդամենը				**100409.03**

Չափաբաժին 4

Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրում փողոցների տուֆ քարով սալարկման նախագիծ

N/N ը/կ	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Քանակ	1 միավ. ընդ.արժ. հազ.դր.	Ընդհանուր արժեքը հազ. դր.
1	2	3	4	5	6
	Հողային աշխատանքներ				
1	10e IV կարգի գրունտի մշակում բուլդոզերով, տեղափոխելով 50մ լիցք	1000մ³	0.056	1545.85	86.57
2	Լիցքի խտացում պնևմոգլդոնով մեկ հետքով 6 անցումով, 30սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	1000մ³	0.056	868.30	48.62
3	10e IV կարգի գրունտի քանդում բուլդոզերով, տեղափոխելով 30մ լիցք	1000մ³	1.039	1061.64	1103.04
4	10e IV կարգի գրունտի բարձում ավտոինքնաթափեր էքսկավատորով (1մ³)	1000մ³	1.039	793.35	824.30
5	Տեղափոխում լցակույտ 3կմ	տ	1974	1.61	3175.27
6	Հողային պաստառի մակերևույթի համահարթեցում մեխանիզմով	100մ²	30.45	38.77	1180.55
	Ճանապարհային պատվածք				
1	Ավազե շերտ h=10սմ	մ³	286.1	8.75	2504.58
2	Տուֆ քարով սալարկ h=18սմ հաստ. (20x40x18սմ չափի բլոկներ)/գծային չափերում մինչև 3սմ շեղումները թույլատրելի են/	100մ²	28.61	638.65	18271.68
3	2սմ հաստությամբ ցեմենտավազե շաղախ մանրահատիկ ավազով տուֆե քարերի արանքում, 1:3	մ²	249	8.68	2161.69
4	Թաքնված եզրաքար 15x28սմ չափսի միաձույլ բետոնից B20, լայնական և երկայնական երկարությունները միասին	մ³	52	62.07	3227.46

5	Կողնակների իրականացում ավազակոպիճով 2x0.5 լայնությամբ, h=10սմ	100մ²	12.18	104.71	1275.41
	Ուղիներ				
1	10e IV կարգի գրունտի քանդում բուլդուզերով, տեղափոխելով 30մ լիցք	1000մ³	1.392	1061.64	1477.80
2	10e IV կարգի գրունտի բարձում ավտոինքնաթափեր էքսկավատորով (1մ³)	1000մ³	1.392	793.35	1104.35
3	Տեղափոխում լցակույտ 3կմ	տ	2645	1.61	4254.60
4	Հողային պաստառի մակերևույթի համահարթեցում մեխանիզմով	100մ²	4.64	38.77	179.89
5	Ավազե շերտ h=10սմ	մ³	46.4	8.75	406.20
6	Տուֆ քարով սալարկ h=18սմ հաստ. (20x40x18սմ չափի բլոկներ)/գծային չափերում մինչև 3սմ շեղումները թույլատրելի են/	100մ²	4.64	638.65	2963.32
7	2սմ հաստությամբ ցեմենտավազե շաղախ մանրահատիկ ավազով տուֆե քարերի արանքում, 1:3	մ²	40	8.68	347.26
8	Թաքնված եզրաքար 15x28սմ չափսի միաձույլ բետոնից B20, լայնական և երկայնական երկարությունները միասին	մ³	29	62.07	1799.93
	Ջրընդունիչի կառուցում				
1	Ջրընդունիչի տեղադրում	գծմ	7	10.49	73.40
2	Ամրանային ցանց 100x100x4	մ²	8.4	1.16	9.76
3	Շվելեր 8	գծմ	26.6	2.97	79.09
4	Անկյունակ 45x45x4	գծմ	14	1.52	21.25
5	Անկյունակ 80x80x6	գծմ	14	4.27	59.84
6	Միաձույլ բետոն B-15 դասի բետոնից	մ³	2.2	59.40	130.69
7	Մետաղական էլեմենտների յուղաներկում	100մ²	0.042	160.11	6.72
	Դիտահորերի բարձրացում				
1	Դիտահորերի բարձրացում միաձույլ B-20 դասի բետոնով (միջինը 15սմ հաստությամբ)	մ³	2	80.97	161.94
	Դիտահորերի իջեցում				
1	Ե/բ դիտահորերի պատերի քանդում հարվածահար մուրճով, միջինը 15սմ հաստ.	մ³	1	32.09	32.09
2	Բետոնի բարձում մեքենային ձեռքով	տ	1.8	0.75	1.35
3	Տեղափոխում լցակույտ 3կմ	տ	1.8	1.61	2.90
4	Դիտահորի կտրված մասի հավասարեցում բետոնե շաղախով, միջինը 3սմ հաստ.	100մ²	0.13	162.30	21.64

Ընդամենը	**46993.19**
ԱԱՀ 20%	**9398.64**
Ընդամենը	**56391.82**

Սպիտակ համայնքի Լեռնանցք բնակավայրի գերեզմանատուն տանող ճանապարհի տուֆ քարով սալարկման նախագիծ

N/N ը/կ	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Քանակ	1 միավ. ընդ.արժ. հազ.դր.	Ընդհանուր արժեքը հազ. դր.
1	2	3	4	5	6
	Հողային աշխատանքներ				
1	10e IV կարգի գրունտի մշակում բուլդոզերով, տեղափոխելով 50մ լիցք	1000մ³	0.111	1545.85	171.59
2	Լիցքի խտացում պնևմոգլդոնով մեկ հետքով 6 անցումով, 30սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	1000մ³	0.111	868.30	96.38
3	10e IV կարգի գրունտի քանդում բուլդոզերով, տեղափոխելով 30մ լիցք	1000մ³	1.14	1061.64	1210.27
4	10e IV կարգի գրունտի բարձում ավտոինքնաթափեր էքսկավատորով (1մ³)	1000մ³	1.14	793.35	904.42
5	Տեղափոխում լցակույտ 3կմ	տ	2166	1.61	3484.11
6	Հողային պաստառի մակերևույթի համահարթեցում մեխանիզմով	100մ²	25.2	38.77	977.01
	Ճանապարհային պատվածք				
1	Ավազե շերտ h=10սմ	մ³	229.6	8.75	2009.97
2	Տուֆ քարով սալարկ h=18սմ հաստ. (20x40x18սմ չափի բլոկներ)/գծային չափերում մինչև 3սմ շեղումները թույլատրելի են/	100մ²	22.96	638.65	14663.32
3	2սմ հաստությամբ ցեմենտավազե շաղախ մանրահատիկ ավազով տուֆե քարերի արանքում, 1:3	մ²	200	8.68	1736.30
4	Թաքնված եզրաքար 15x28սմ չափսի միաձույլ բետոնից B20, լայնական և երկայնական երկարությունները միասին	մ³	63	62.07	3910.20
5	Կողնակների իրականացում ավազակոպիճով 2x0.5 լայնությամբ, h=10սմ	100մ²	7	104.71	733.00
	Ուղիներ				
1	10e IV կարգի գրունտի քանդում բուլդոզերով, տեղափոխելով 30մ լիցք	1000մ³	0.094	1061.64	99.79
2	10e IV կարգի գրունտի բարձում ավտոինքնաթափեր էքսկավատորով (1մ³)	1000մ³	0.094	793.35	74.58
3	Տեղափոխում լցակույտ 3կմ	տ	178	1.61	286.32
4	Հողային պաստառի մակերևույթի համահարթեցում մեխանիզմով	100մ²	3.34	38.77	129.49
5	Ավազե շերտ h=10սմ	մ³	33.4	8.75	292.39
6	Տուֆ քարով սալարկ h=18սմ հաստ. (20x40x18սմ չափի բլոկներ)/գծային չափերում մինչև 3սմ շեղումները թույլատրելի են/	100մ²	3.34	638.65	2133.08
7	2սմ հաստությամբ ցեմենտավազե շաղախ մանրահատիկ ավազով տուֆե քարերի արանքում, 1:3	մ²	29	8.68	251.76
8		մ³	21	62.07	1303.40

	Թաքնված եզրաքար 15x28սմ չափսի միաձույլ բետոնից B20, լայնական և երկայնական երկարությունները միասին				
	Բետոնե վաքեր (30 x 34)				
1	Բետոնե վաքեր (30 x 34)	հատ	88	43.87	3860.75
2	Փոսորակի փորում մեխանիզմով	1000մ³	0.09468	793.35	75.11
3	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	18.41	12.80	235.73
4	Քսվածքային ջրամեկուսացում	100մ²	1.9988	114.82	229.50
5	Հետադարձ լիցք ձեռքով	100մ³	0.2104	216.63	45.58
6	Ավելացած բնահողի բարձում ա/ի վրա	տ	132.6	0.75	99.47
7	Տեղափոխում լցակույտ 3կմ	տ	132.6	1.61	213.22
8	B-20 դասի բետոն մանրահատիկ ավազով	մ³	3	60.64	181.91
	Ջրընդունիչի կառուցում				
1	Ջրընդունիչի տեղադրում	գծմ	19	10.49	199.23
2	Ամրանային ցանց 100x100x4	մ²	22.8	1.16	26.48
3	Շվելեր 8	գծմ	60.8	2.97	180.78
4	Անկյունակ 45x45x4	գծմ	38	1.52	57.67
5	Անկյունակ 80x80x6	գծմ	38	4.27	162.42
6	Միաձույլ բետոն B-15 դասի բետոնից	մ³	3.9	59.40	231.68
7	Մետաղական էլեմենտների յուղաներկում	100մ²	0.076	160.11	12.17

Ընդամենը	**40279.05**
ԱԱՀ 20%	**8055.81**
Ընդամենը	**48334.86**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սպիտակ համայնք
Հասցե՝ ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06963722
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ՝ 900242303023
Համայնքի ղեկավար՝

_____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինարվեստ» ՍՊԸ
ք. Երևան, Արաբկիր, Սոսեի փող. շենք1 բն. 61
էլ. հասցե՝ shinarvest@gmail.com
Հ/Հ 1150006772902910
ՀՎՀՀ 00221091
հեռ. 093303002; 033-82-07-07,
Տնօրեն՝

_____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«19» 06 2025թ. կնքված
«ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-25/07-2» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՏՈՒՖ ՔԱՐՈՎ ՍԱԼԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Սպիտակ համայնքի Սարահարթ բնակավայրի 5-րդ, 6-րդ և 15-րդ փողոցների տուֆ քարով սալարկման աշխատանքներ	Կողմերի միջև կնքվող պայմանագիրը /ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում համաձայնագիրը/ ուժի մեջ մտնելու օրը	25.12.2025թ.
2	Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրում փողոցների և Սպիտակ համայնքի Լեռնանցք բնակավայրի գերեզմանատուն տանող ճանապարհի տուֆ քարով սալարկման աշխատանքներ		
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սպիտակ համայնք
Հասցե՝ ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06963722
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ՝ 900242303023
Համայնքի ղեկավար՝

_____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինարվեստ» ՍՊԸ
ք. Երևան, Արաբկիր, Սոսեի փող. շենք1 բն. 61
էլ. հասցե՝ shinarvest@gmail.com
Հ/Հ 1150006772902910
ՀՎՀՀ 00221091
հեռ. 093303002, 033-82-07-07,
Տնօրեն՝

_____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«19» 06 2025թ. կնքված
«ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-25/07-2» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45231177	Սպիտակ համայնքի Սարահարթ բնակավայրի 5-րդ, 6-րդ և 15-րդ փողոցների տուֆ քարով սալարկման աշխատանքներ	14 910 000	29 820 000	29 820 000	29 820 000	29 820 000	29 820 000	29 820 000	29 820 000
4	45231177	Սպիտակ համայնքի Լեռնավան բնակավայրում փողոցների և Սպիտակ համայնքի Լեռնանցք բնակավայրի գերեզմանատուն տանող ճանապարհի տուֆ քարով սալարկման աշխատանքներ	15 330 000	30 660 000	30 660 000	30 660 000	30 660 000	30 660 000	30 660 000	30 660 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*****Պետական միջոցների մասով վճարման ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սպիտակ համայնք
Հասցե՝ ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06963722
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ՝ 900242303023
Համայնքի ղեկավար՝

_____ Ք. ԾԻԿՈՂՈՍՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շինարվեստ» ՍՊԸ
ք. Երևան, Արաբկիր, Սոսեի փող. շենք1 բն. 61
էլ. հասցե՝ shinarvest@gmail.com
Հ/Հ 1150006772902910
ՀՎՀՀ 00221091
հեռ. 093303002; 033-82-07-07,
Տնօրեն՝

_____ Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ